## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դողս համայնք,
Հեռ. (094)339931 , doghs.armavir@mta.gov.am

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N30
*24 մարտ 2017թ.*

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Դողս համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 17-ի թիվ 9-Ն որոշումը.

Արդիր 53 թերթ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՐԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Համբարձումյան*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.5/9236-17
27 — 03 — 2017թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դողս համայնք
Հեռ. (094)339931, doghs.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՄԱՐՏԻ 2017թվականի **N 9-Ն**

ԴՈՂՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 48-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ՈՐՈՇԵՑ

1. Դողս համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 48-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

### Բյուջեի վարչական մաս

1/Բյուջեի վարչական մասի եկամուտներ հատված
1111- Գույքահարկ շենք- շինությունների համար տողը ավելացնել 850,0/ութ հարյուր հիսուն/ հազար դրամով:
1112- Հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար տողը ավելացնել 6300,0 հազար դրամ /վեց միլիոն երեք հարյուր հազար դրամով/ :
1137- Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տողը ավելացնել 30,0 /երեսուն / հազար դրամ :
1331- Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձակալության վարձավճարներ տողը ավելացնել 550,0 /հինգ հարյուր հիսուն/ հազար դրամ:
Ընդհամենը 7730,0 հազար դրամ /յոթ միլիոն յոթ հարյուր երեսուն հազար դրամ / գումարը բաշխել հետևյալ կերպ:
2/ Բյուջեի վարչական մասի ծախսային հատվածներ.
1.6.1- Ընդհանուր բնույթի հանրային ծրագրեր:
4251- Շենք-շինությունների ընթացիկ վերանորոգման ծախսեր հոդվածը ավելացնել 2300,0 հազար դրամ /երկու միլիոն երեք հարյուր հազար դրամ/ :
4.5.1- Ճանապարհային տրանսպորտ ծրագիր:

4251- Շենք-շինությունների և կառույցների ընթացիկ ծախսեր հոդվածին հատկացնել 1400,0 հազար դրամ /մեկ միլիոն չորս հարյուր հազար դրամ/:
10.7.1- Սոցիալական հատուկ արտոնություններ ծրագիր. 4729- Այլ նպաստներ բյուջեից հոդվածը ավելացնել 4030,0 հազար դրամ /չորս միլիոն երեսուն հազար դրամ /:

Բյուջեի ֆոնդային մաս.
1/ Հաստատել՝ բյուջեի տարեսկզբի վարչական մասի ազատ մնացորդը՝ 129,2 հազար դրամ /մեկ հարյուր քսանինը հազար երկու հարյուր դրամ/ և բյուջեի տարեսկզբի ֆոնդային մասի ազատ մնացորդը՝ 46,8 հազար դրամ /քառասունվեց հազար ութ հարյուր դրամ / և ամբողջ / մեկ հարյուր յոթանասունվեց հազար դրամ / ուղղել ֆոնդային մաս:
2/ Համայնքի սեփականություն հանդիսացող հողի օտարումից առաջացած 414,0 հազար դրամ / չորս հարյուր տասնչորս հազար դրամ/ գումարը տրամադրել՝ 4.9.1- Այլ դասերի տնտեսական հարաբերություններ ծրագրին: Առաջացած 590.0 հազար դրամը / հինգ հարյուր իննսուն հազար դրամ / ուղղել՝ 1.1.1- Տեղական ինքնակառավարման ծրագրի՝ 5122- վարչական սարքավորումներ հոդվածին:

**2.** Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԴԱՄՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ՌՈՄԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱՄ
7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՐԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**